Հ. Մ. Բժշկեանը, որ 1830 թուականին հրատարակել է Լեհաստանի հայկական գաղութներում կատարած իր որոնումների արդիւնքները, այսպէս կոչուած «Լուովեան յիշատակարան»-ից բերում է մի հատուած, ուր, Սալմասեցու մասին խօսելով, յիշատակւում է նրա կտակը՝ հետեւեալ տեղեկութեամբ. «Դոյ նաեւ իւր կտակ, յորում յիշէ թէ սրբազան հայրապետն Հռովմայ առաքեալ է զինքն առ Ֆէրտինանտոս կայսր Գերմանացւոց, առ որում եկաց ամիսս չորս»[27]։ Բժշկեանից դեռ 60 տարի առաջ, Յովսէփ Եպիփան Մինասովիչը իր «Յիշատակարանք հայոց ազգի, թագաւորութեան եւ թագաւորների մասին» անտիպ աշխատութեան մէջ նոյն տեղեկութիւնն էր տալիս՝ քաղելով մի աւելի հին աղբիւրից՝ Յիսուսեան ընկերութեանը պատկանող մի լատին անանուն հեղինակի գրածից, թէ «կարելի է տեսնել նաեւ [Ստեփանոսի] կտակը՝ նրա [սեփական] կնիքով, որում պատմում է, թէ ինչպէ՛ս է սրբազան քահանայապետի կողմից ուղարկուել Ֆերդինանդ կայսեր մօտ եւ չորս ամիս մնացել այնտեղ, եւ յետոյ Լէոպոլիս վերադարձել»[28]։ Պետրովիչն այս երկու աղբիւրներն էլ յիշատակում է՝[29] ասելով, որ նրանց մէջ «ինչ ինչ մանրամասնութիւններ թէեւ անճիշտ կը թուին, բայց չեն հակասեր պատմական ճշմարտութեան, այլ կը կարօտին բացատրութեան». եւ տալիս է իր բացատրութիւնը։ «Արդարեւ, — գրում է նա, — կարոլոս Ե կայսրը (1500–1558), որդին Փիլիպպոս Գեղեցիկի, Աւստրիայ արքեդուքսին, եւ Յովհաննա Լափացցայի, ժառանգած էր, ի միջի այլոց, նաեւ Հապսպուրկներու կալուածներու իրաւունքը։ Սակայն 1521-ին ան թողուց Աւստրիացւոց կալուածներու ժառանգութիւնը ի նպաստ կրտսեր եղբօրը, Ֆէրտինանտի (1503–1564), որ անոնց թագաւոր եղաւ եւ 1558-ին ալ կայսր։ Ասկից առաջ եկած են յիշեալ վկայութիւններու մէջ այդ անճշտութիւնները»։ Եւ այդ անճշտութիւնների վերաբերեալ որպէս բացատրութիւն՝ Պետրովիչը ենթադրում է, որ Սալմասեցին հայկական հարցով կարոլոս Ե-ին դիմելիս, պէտք է դիմած լինի նաեւ Ֆերդինանդ թագաւորին[30]։

Նախ ասենք, որ Բժշկեանի եւ Մինասովիչի գրածները ոչ թէ վկայութիւններ են, ինչպէս համարում է Պետրովիչը, այլ աղբիւրներ, որոնք մեզ հաղորդում են Սալմասեցու ձեռքով գրուած կտակի պարունակութիւնը. ուրեմն՝ վկայութիւնը Սալմասեցու գրչից է։ Երկրորդ՝ նկատենք, որ այստեղ անտեղի է խօսել անճշտութիւնների մասին։ Ստեփանոս Սալմասեցու կտակը, ըստ երկու աղբիւրների, պարզապէս ասում է, որ պապը նրան ուղարկել է Ֆերդինանդ կայսեր մօտ, առանց ասելու, թէ ո՛ր պապն էր ուղարկողը եւ ո՛ր թուականին։ Այսքան փոքր եւ այսքան պարզ տեղեկութեան մէջ աւելորդ կը լինէր որոնել պատմական անճշտութիւններ։ Բայց Պետրովիչը իր հաշիւներով ինքն է ստեղծում անճշտութիւնները։ Ելակէտ ընդունելով Արետինոսի այն վկայութիւնը, թէ Սալմասեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ի յանձնարարագրով Հռոմից մեկնել էր՝ Գերմանիայի կայսր Կարոլոս Ե-ի մօտ գնալու համար[31], Պետրովիչը բնականօրէն հետեւեցնում է, որ նա, Սալմասեցին, այդ թուականին Գերմանիայի կայսերական դահի վրայ պիտի գտած լինէր Կարոլոս Ե-ին (1519–1558 թթ.)[32] եւ ոչ թէ նրա կրտսեր եղբայր Ֆերդինանդ Ա-ին, որն այդ ժամանակ ոչ թէ Գերմանիայի կայսր էր, այլ Բոհեմիայի թագաւոր (1527–1558 թթ.), եւ հետագայում է միայն, որ Կարոլոս Ե-ին յաջորդեց որպէս կայսր (1558–1564 թթ.)[33]։

---

27 Հ. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 107։

28 J. E. Minasowicz, «Memorabilia de gente, regno, regibusque Armeniæ», Bibliotheca Apostolica Vaticana, Cod. Vat. Lat. № 12561, p. 122.

29 ՊՍՍ էջ 45–47։ PCha p. 98–99.

30 ՊՍՍ էջ 47։ PChA p. 99.

31 Նրա ելակէտն իրօք այդ է. «Ստեփանոս Սալմասեցի 1550-ի ապրիլի վերջերը ... ուղղուեցաւ դէպի Վիեննա ...։ Միայն գիտենք աւանդութենէ՝ թէ Հայոց կաթողիկոսը Վիեննայի արքունիքին մօտ չորս ամիս մնացած է»։ տես ՊՍՍ էջ 31։ PChA p. 95–96.

32 Տես «The Encyclopædia Britannica», 14th ed., vol. V, New York, 1929, p. 260–261.

33 Ibidem, vol. IX, New York, 1929, p. 165–166.